«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2019 թվականի N –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 665-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. 1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի ««Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

- որոշման N 1 հավելվածում՝

ա. 11-րդ կետը «օրն է» բառից հետո լրացնել «, երբվանից նշանակվում է կենսաթոշակը։ Ընդ որում Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված եռամսյա ժամկետը հաշվարկվում է «Փորձաքննությունը կատարվել է» տողում նշված երկրորդ ամսաթվից» բառերով,

բ. 14.4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.5-րդ կետ.

«14.5. Մինչև 1996 թվականի նոյեմբերի 10-ն աշխատած ժամանակահատվածի համար սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում, եթե անձն աշխատել է քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում (առանց ենթակա կազմակերպությունների)։»,

գ. 25-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 25.1-ին, 25.2–րդ և 25.3-րդ կետեր.

«25.1. Քաղաքացիական ավիացիայի թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական և թռիչքային անձնակազմերում ծառայելու ժամանակաշրջանի մեջ հաշվառվում են նաև զինված ուժերի, ավիացիոն

տրանսպորտային էսկադրիլիայի (ավիաէսկադրիլիայի) թռիչքային և թռիչքափորձարկման անձնակազմերի պաշտոններում ծառայելու (աշխատելու) ժամանակահատվածները:

25.2. Քաղաքացիական ավիացիայի ինժեներատեխնիկական ծառայության աշխատողների ծառայելու ժամանակահատվածների մեջ հաշվառվում են նաև զինված ուժերի ինժեներատեխնիկական ծառայությունում, ավիացիոն տրանսպորտային էսկադրիլիայի (ավիաէսկադրիլիայի) ինժեներաավիացոն ծառայությունում սույն որոշմամբ հաստատված N 5 հավելվածի 4-րդ կետում նշված պաշտոններում աշխատելու ժամանակահատվածները:

25.3. Օդանավերի տեխնիկական սպասարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունում 2009 թվականի մայիսի 1-ից հետո սույն որոշմամբ հաստատված N 5 հավելվածի 4-րդ կետում նշված պաշտոններում աշխատած ժամանակահատվածները հաշվառվում են այդ կազմակերպության՝ օդանավերի տեխնիկական սպասարկման աշխատանքներ կատարելու իրավունք տվող սերտիֆիկատի վավերականության ժամանակահատվածում:»,

դ. 28-րդ և 29-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

ե. 41-րդ կետի 7-րդ ենթակետում «լրացուցիչ փաստաթուղթ» բառերը փոխարինել «փաստաթուղթ (տեղեկատվություն)» բառերով, իսկ կետը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«Սույն կետի 6-րդ և 7-րդ ենթակետերի դրույթները տարածվում են նաև այն դեպքերի վրա, երբ այդ ենթակետերում նշված փաստաթղթերը հայտնաբերվել են զինծառայողի անձնական գործում:»,

զ. 42-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կարգի 41-րդ կետի 7-րդ ենթակետում նշված դեպքում կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է այն օրվանից, երբվանից պետք է հաշվարկվեր (վերահաշվարկվեր՝ հաշվի առնելով կենսաթոշակի գործում հայտնաբերված փաստաթուղթը (տեղեկատվությունը), բայց ոչ շուտ, քան դիմումը (որի հետ ներկայացվել է այդ փաստաթուղթը) ներկայացնելու օրը: Եթե կենսաթոշակի գործում առկա չէ դիմում, որի հետ ներկայացվել է հայտնաբերված փաստաթուղթը (տեղեկատվությունը), ապա կենսաթոշակը վերահաշվարկվում է այն օրվանից, երբ հայտնաբերվել է այդ փաստաթուղթը (տեղեկատվությունը):»,

է. 43-րդ կետի 3-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին ենթակետ.

«3.1) կենսաթոշակ ստանալու իրավունքը օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով վերականգնվելու դեպքում անձը ներկայացրել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելուց հետո ընկած ժամանակահատվածում աշխատանքային ստաժի մասին փաստաթուղթ.»,

ը. 49-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 49.1-ին կետ.

«49.1. Եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվա դրությամբ անձն ունեցել է այլ տեսակի կենսաթոշակի իրավունք և այդ տեսակի կենսաթոշակ նշանակելու դիմում ներկայացրել է 2018 թվականի հունվարի 1-ից հետո մինչև 2019թ. հուլիսի 25-ը՝ կենսաթոշակ ստանալու իր իրավունքը դադարելու օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, ապա նրա կենսաթոշակի նշանակման օր է համարվում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու օրը, և նրան դիմելուն նախորդող ժամանակահատվածի համար վճարվում է չվճարված կենսաթոշակի գումար:».

թ. 50.2-րդ կետի «նշանակելու» բառը փոխարինել «ստանալու իրավունքը վերականգնելու» բառերով, իսկ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն կետում նշված եռամսյա ժամկետը հաշվարկվում է «Փորձաքննությունը կատարվել է» տողում նշված երկրորդ ամսաթվից:»,

ժ. 61-րդ կետի «կենսաթոշակառուի հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում» բառերը փոխարինել «ծառայության կենսաթոշակ նշանակող ցանկացած ստորաբաժանում» բառերով,

ի. 69-րդ կետը «դեպքի» բառից հետո լրացնել «, ինչպես նաև վերափորձաքննության ներկայանալու և մինչև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից այդ անձի վերաբերյալ որոշում կայացնելը մահանալու դեպքի» բառերով,

- որոշման N 2 հավելվածում՝

ա. 21.3-րդ կետի «ժամանակավորապես» բառը փոխարինել «անորոշ կամ որոշակի ժամկետով» բառերով.

բ. 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28. Հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը խնամելու ժամանակահատվածը նրա ծնողի աշխատանքային ստաժում հաշվառվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի տված՝ հաշմանդամ երեխա ճանաչելու, հաշմանդամության ժամանակահատվածի մասին վարչական ակտի քաղվածքով, իսկ հաշմանդամ երեխայի խնամակալ ճանաչված անձի աշխատանքային ստաժում՝ նաև խնամակալություն իրականացնող լիազոր մարմնի տված՝ խնամակալ ճանաչված լինելու և խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքով:»,

գ. 28-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին կետ.

«28.1 Առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը խնամակալ ճանաչված անձի աշխատանքային ստաժում հաշվառվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի տված՝ խնամարկյալի հաշմանդամության խմբի և

ժամանակահատվածի մասին վարչական ակտի քաղվածքով և խնամակալություն իրականացնող լիազոր մարմնի տված՝ խնամակալ ճանաչված լինելու և խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքով:»,

դ. 51-րդ կետը «մասնակի» բառերից հետո լրացնել «,կամ երկարամյա ծառայության» բառերով.

- որոշման N 5 հավելվածում՝

ա. 4-րդ կետի 1-ին ենթակետի «բոլոր անվանումներ» բառերից հետո լրացնել «այդ թվում՝ դիագնոստիկ լաբորատորիայի» բառերը.

բ. 4-րդ կետի 3-րդ ենթակետի «ավիացիոն» բառը փոխարինել «այդ թվում՝ վերահսկողության բաժնի» բառերով.

գ. 4-րդ կետի 4-րդ ենթակետը «պետեր» բառից հետո լրացնել «, նրանց տեղակալներ» բառերով,

- որոշման N 6 հավելվածի աղյուսակի՝

ա. 8-րդ կետի 3-րդ սյունակը «մարզիչ» բառից հետո լրացնել «, դասատու, ուսուցիչ, մանկավարժ» բառերով,

բ. 9-րդ կետի 3-րդ սյունակը «խմբագիր,» բառից հետո լրացնել «ավագ,» բառով,

- որոշման N 10 հավելվածում՝

ա. 9-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Օդանավերի տեխնիկական սպասարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունում աշխատած անձը՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնում է նաև այդ կազմակերպության հետ կնքած աշխատանքային պայմանագիրը և օդանավերի տեխնիկական սպասարկման վկայականը կամ քաղաքացիական ավիացիայի տեխնիկական սպասարկման վկայականը:».

բ. 28-րդ կետի 3-րդ ենթակետը «վկայականը» բառից հետո լրացնել «կամ մահվան փաստը հավաստող՝ օտարերկրյա պետության տված փաստաթուղթը՝ վավերացված ապոստիլով» բառերով,

գ. 28-րդ կետի 4-րդ ենթակետը «վկայականը» բառից հետո լրացնել «կամ մահվան փաստը հավաստող փաստաթուղթը» բառերով,

դ. 29-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 30-րդ կետ.

«30. Հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության ներկայացած և մինչև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից որոշում կայացնելը մահացած անձի դեպքում, բացի սույն ցանկի 28-րդ կետում

նշված փաստաթղթերից, ներկայացվում է նաև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի տված տեղեկանքը մահացած անձի՝ վերափորձաքննության ներկայանալու և նրա վերաբերյալ որոշում չկայացնելու մասին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: